Հաստատված է
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ամբիոնի
«11» 01. 2022 թ.-ի նիստում: Արձ. № 1
Ամբիոնի պետ՝
Գ. Խուդոյան

« »----------2022 թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		ՀՀ վարչական դատավարության իրավունք
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Իրավագիտություն, վճարովի ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ **Էլ. հասցե**		Վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոն varchakan@ro.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Դասախոս, ոստիկանության մայոր Ա. Մարգարյան Հեռախոս 093 32 23 55, abgarmargaryan@mail.ru
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ **ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ**		ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի վճարովի ուսուցման 3 կուրս, 5-կիսամյակ, **բակալավր**
ԿՐԵԴԻՏՆԵՐ		**3 (երեք)**
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ և ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ		«ՀՀ վարչական դատավարության իրավունք» առարկայի ընդհանուր ծավալը կազմում է 90 ժամ, որից 28 դասախոսություն, 16 սեմինար, 4 գործնական, 42 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը

		կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում եզրափակիչ գնահատմամբ:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		Դասընթացը կառուցվում է «ՀՀ վարչական իրավունք», առարկայի իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ **ԽՆԴԻՐՆԵՐ**		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ վարչական դատավարության վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են՝ • սահմանել վարչական դատավարության հասկացությունը, • վեր հանել ժամանակի ընթացքում և տարածության մեջ վարչական իրավախախտումների գործողության առանձնահատկությունները, • ներկայացնել վարչական իրավախախտումների հասկացությունն ու տեսակները, • ներկայացնել վարչական դատավարության հասկացությունը, տարրերն ու հատկանիշները, և ուսումնասիրել ապացույցները վարչական դատավարությունում • վարչական պատասխանատվությունն ու դրա հիմքը, • ներկայացնել վարչական դատավարության փուլերը և դրանց տարբերակիչ հատկանիշները:

ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ		
1. Իմանա՝		1) Վարչական դատավարության բնութագիրը 2) Ապացույցները վարչական դատավարությունում 3)Դատավարական ժամկետներ, դատական ծախսեր և ծանուցումներ 4)Վարչական դատավարության փուլերը 5)Հատուկ վարույթներ վարչական դատավարությունում: Վարչական դատավարության վերաբերյալ միջազգային իրավական փորձը: ա) ընկալել վարչական դատավարության նշանակությունը, բ) քննարկումներ և բանավեճեր անցկացնել վարչական դատավարության կարգավորման առարկայի, դրա նորմերի գործնական իրականացման կառուցակարգերի և առաջադրվող այլ հարցերի շուրջ, գ) գնահատել վարչական դատավարության ոլորտում առկա խնդիրները և տալ դրանց ճիշտ լուծումները, դ) վերլուծել ՀՀ վարչական դատական համակարգի տարրերից յուրաքանչյուրի կազմակերպման, իրավական դրության և գործունեության իրավական կարգավորման վիճակը, ընդունված ակտերի իրավակիրառ պրակտիկան և կատարելու համապատասխան առաջարկություններ: ե) վերլուծել վարչական դատավարության ինստիտուտի տարրերը:
2. Կարողանա՝		ա) ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի կառուցակարգերի մեկնանաբանման մեթոդաբանությանը, բ) մարդու իրավունքների պաշտպանության վարչադատավարական պահանջների հիմունքները, գ) կատարել գործնական առաջադրանքներ, կազմել փաստաթղթեր, լուծել խնդիրներ կամ թեստեր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1.Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք 05.12.2013թ. 2.Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք ՀՀ Սահմանադրական օրենքը 07.02.2018թ., ՀՀՊՏ 2018.02.12/10(1368) Հոդ.143
Լրացուցիչ		3.Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք 06.12.1985թ. 4. Հայաստանի Հանրապետության օրենքը դատական ակտերի հարկադիր կատարման մասին 05.15.1998թ., ՀՀՊՏ 1998.06.15/12(45):

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ		Բաղադրիչ 1- 20% (Միջանկյալ 1)

ԿՇԻՌ	Բաղադրիչ 2- 20% (Միջանկյալ 2՝) Բաղադրիչ 3- 60% (ամփոփիչ քննություն՝ առկայության դեպքում)
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ	

Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով		
18-20	Գերազանց	Միջանկյալ գնահաման միավոր	
13-17	Լավ	Հարց 1	Հարց 2
8-12	Բավարար	2 միավոր	2 միավոր
0-7	Անբավարար		
0	Չներկայացած		

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ	Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները.

		դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ներկայություն		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Սովորողը այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1. Վարչական դատավարության բնութագիրը (6 ժամ ընդհանուր ժամաքանակը՝ 4 դասախոսություն, 2 սեմինար)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Վարչական դատավարության բնութագիրը 2. Վարչական դատավարությանը մասնակցող անձինք և նրանց կարգավիճակը 3. Դատավարական իրավահաջորդությունը, ոչ պատշաճ կողմի փոխարինումը պատշաճ կողմով 4. Վարչական դատավարության սկզբունքները 5. Ներկայացուցչությունը վարչական դատավարությունում:	Հարցեր 1-5 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները նախօրոք ծանոթանում են դասագրքում ներկայացված թեմայի հիմնադրույթներին և խնդրահարույց հարցերը ներկայացնում քննակման: Հարցեր 1-5 - սեմինար պարապմունք: Ուսանողները նախօրոք ծանոթանում են հանձնարարված գրականությանը, իրավական ակտերին և քննարկում

	ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերը: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ:

Թեմա 2. Ապացույցները վարչական դատավարությունում (8 ժամ ընդհանուր ժամաքանակը՝ 4 դասախոսություն, 4 սեմինար)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Ապացույցների հասկացությունը, վերաբերելիությունը և թույլատրելիությունը 2. Ապացուցման բեռը վարչական դատավարությունում 3. Ապացույցների տեսակները՝ վկայի ցուցմունքը 4. Ապացույցների տեսակները՝ փորձագետի ցուցմունքը 5. Ապացույցների տեսակները՝ գրավոր ապացույցները 6. Ապացույցների տեսակները՝ իրեղեն ապացույցները 7. Ապացուցումը վարչական դատավարությունում:	Հարցեր 1-7 - անցկացվում է դասախոսություն: Ուսանողները նախօրոք ծանոթանում են քննարկվող հարցերի վերաբերյալ գրականությանը և հետաքրքրություն ներկայացնող հարցերը առաջադրում քննարկման: Հարցեր 1, 2, 3, 4, 5, 6, 7 - անցկացվում է սեմինար պարապմունք քննարկման ձևով Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 3. Դատավարական ժամկետներ, դատական ծախսեր և ծանուցումներ (8 ժամ ընդհանուր ժամաքանակը՝ 4 դասախոսություն, 4 սեմինար)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Դատավարական ժամկետների հասկացությունը և հաշվարկման կարգը 2. Դատական ծախսերի հասկացությունը, նպատակները և տեսակները 3. Դատական ծանուցման նշանակությունը 4. Ծանուցագրին ներկայացվող պահանջները 5. Ծանուցագրի հանձնման կարգը:	Հարցեր 1-5 - Դասախոսություն՝ ուսանողների ակտիվ ներգրավմամբ, խմբային քննարկման ձևով: Հարցեր 1-5 - ինքնուրույն աշխատանք. Ուսանողները ծանոթանում են դասագրքի նյութերին և հանձնարարված այլ գրականությանը, վեր հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են դասախոսությունների ընթացքում: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ, տրվում են թեստային առաջադրանքներ:

Թեմա 4. Վարչական դատավարության փուլերը (12 ժամ ընդհանուր ժամաքանակը՝ 6 դասախոսություն, 4 սեմինար, 2 գործնական)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Գործի հարուցումը վարչական դատարանում: Հայցի հասկացությունը և տեսակները 2. Հայցադիմումին ներկայացվող պահանջները, ներկայացման կարգը և դատարանի կողմից կայացվող որոշումները 3. Գործը դատաքննությանը նախապատրաստելու փուլ 4. Գործի վարույթի կասեցումը, կարճումը և վերսկսելը 5. Դատաքննությունը վարչական դատարանում՝ դատաքննության փուլ 6. Արագացված դատաքննություն և դատարանի կողմից կիրառվող սանկցիաները 7. Վարչական դատարանի դատական ակտերի հասկացությունը և տեսակները 8. Վարույթը վերաքննիչ դատարանում՝ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք, բողոք բերելու ժամկետները, կարգը և կայացվող որոշումները 9. Գործի քննության ժամկետը և կարգը վերաքննիչ դատարանում 10. Վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված բողոքների քննությունը 11. Վարույթը վճռաբեկ դատարանում՝ վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք. բողոք բերելու ժամկետները և կարգը 12. Գործի քննությունը վճռաբեկ դատարանում 13. Վերադաս դատարանի կողմից բեկանված գործն ըստ էության լուծող դատական ակտով գործերի նոր քննությունը 14. Դատական ակտը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու վարույթ 15. Դատական ակտերի հարկադիր կատարումը:	Հարցեր 1-15 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: Ուսանողները նախօրոք ծանոթանում են ներկայացվող իրավունքների վերաբերյալ գրականությանը և օրենսդրական ակտերին, վեր հանում խնդրահարույց հարցերը և ներկայացնում քննարկման: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ, տրվում են թեստային առաջադրանքներ: Հարցեր 1-15 - անցկացվում է սեմինար պարապմունք:

Թեմա 5. Հատուկ վարույթները վարչական դատավարությունում (10 ժամ ընդհանուր ժամաքանակը՝ 6 դասախոսություն, 2 սեմինար, 2 գործնական)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթ 2. Հավաքի անցկացման վերաբերյալ համայնքի ղեկավարի որոշումների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթ 3. Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթ 4.Դատական կարգով վարչական պատասխանատվության	Հարցեր 1-6 - անցկացվում է դասախոսություն: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ, տրվում են առաջադրանքներ:

ենթարկելու վերաբերյալ գործերի վարույթ 5. Լիցենզիայի հետ կապված լիազոր մարմնի որոշումների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթ 6. Նոտարական գործողությունների իրավաչափության վերաբերյալ գործերի վարույթի:	Սովորողը նախապատրաստվում է սեմինարին դասախոսի նախապես հանձնարարված մասնագիտական գրականության համապատասխան էջերը ուսումնասիրելով:

Թեմա 6. վարչական դատավարության վերաբերյալ միջազգային փորձը (4 ժամ ընդհանուր ժամաքանակը՝ 4 դասախոսություն)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Վարչական դատավարության վերաբերյալ միջազգային իրավական չափանիշները 2. Վարչական դատավարության հիմնական համակարգերն արտասահմանյան երկրներում	Հարցեր 1-2 - անցկացվում է դասախոսություն, հանձնարարված այլ գրականության, նորմատիվ ակտերի ուսումնասիրության արդյունքում ծագած խնդրահարույց հարցերի վերաբերյալ քննարկում ծավալելով: Սովորողը նախապատրաստվում է սեմինարին դասախոսի նախապես հանձնարարված մասնագիտական գրականության համապատասխան էջերը ուսումնասիրելով: